

ԱՄԲԵՐԴ ԶԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2013 ԹՎԱԿԱՆԻ
2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԶԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ
ՍԱՐՁՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ՝ ԱՐԱՅԻԿ ԶԱԿՈՐՅԱՆԻ

«17» ԶՈՒՆՎԱՐԻ 2014թ.

գ. Ամբերդ

Հարգելի Ամբերդ Համայնքի բնակիչներ այսօրվա համայնքի ժողովում, որին ներկա է նաև Արմավիրի մարզպետարանի աշխատակից՝ Արայիկ Հակոբյանը, ես ձեզ կներկայացնեմ 2013 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին : Կներկայացնեմ նաև բյուջեի կատարողականի մասին տեղեկություններ և կխոսեմ համայնքում առկա հիմնախնդիրների մասին: Վերջում կլինի հարց ու պատասխան : Այժմ ես հերթով կզեկուցեմ թե, որ բնագավառում ինչ է կատարվել և ինչ պետք է կատարվի:

1. Ֆինանսների բնագավառ :

Համայնքում 2013 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում հավաքագրվել է ընդհանուր 28791.1 հազար դրամ գումար , որը կազմում է 2013 թվականի 2-րդ կիսամյակի կատարողականի 99.8 % -ը որից

ա/ Գյուղնշանակության հողի հարկ հավաքագրվել է 7581.8 հազար դրամ

բ/ Գույքահարկ հավաքագրվել է 1083.5 հազար դրամ

գ/ Վարձակալական հողի հարկ հավաքագրվել է 147.9 հազար դրամ

դ/ Տեղական վճարներ 231.8 հազար դրամ

ե/ Պետության կողմից դոտացյա 19601.4 հազար դրամ

զ/ Տեղական տուրք 52.0 հազար դրամ

է/ Այլ ոչ հարկային գումարներ 71.7 հազար դրամ

ը/ հողի օտարման գումար 21.0 հազար դրամ

Համայնքում սեփական եկամուտների % -ը կազմում է 100 % : Համայնքում կատարված է համայնքի բյուջեի հաշվին հետևյալ աշխատանքները : Համայնքի անապահով ընտանիքների և պատերազմի վետերաններին տրամադրվել է սոցիալական օգնություններ:

Մայիսի 9-ին կազմակերպվել է միջոցառում հայրենական մեծ պատերազմի հաղթանակի և Արցախյան պատերազմի հաղթանակի օրվա առթիվ:

Կատարվել է մշակույթի տան ընթացիկ նորոգում: Նոր տարվա կապակցությամբ

կազմակերպվել է տոնական միջոցառում, կատարվել է հողային ճանապարհների փոսային

նորոգում: Կատարվելու է նաև փողոցների լուսավորություն:

Կատարված է սպորտ հրապարակի մաքրման և նորոգման աշխատանքներ:

1. Հասարակական կարգի պահպանում

Ես որպես համայնքի ղեկավար շատ կարևոր եմ համարում հասարակական կարգի պահպանությունը : Համայնքի բնակիչներից շնորհակալություն եմ հայտնում հասարակական կարգը պահպանելու համար : Կան որոշ անհատներ հատկապես երիտասարդության մեջ, որոնք առանց գիտակցելու փորձում են շեղել համայնքի բնականոն ընթացքը: Տվյալ անհատների հետ կատարվում են աշխատանքներ և հույս ունեմ, որ ամեն ինչ լավ է լինելու :

2. Պաշտպանության բնագավառում

Իմ առաջին նախապայմանն այն է որ, համայնքում իշխի հայրենասիրությունը: Վերջապես բոլորս ապրում ենք Հայաստան աշխարհում, որը մեր բոլորիս տունն է: Հայրենիքի պաշտպանության համար սիրով պետք է կատարենք մեր պարտականությունները, այլապես ազգը, որ գոյատևել է դարեր շարունակ կկործանենք, որի իրավունքը մենք չունենք: Մեր պապերից փոխանցված երկիրը մենք պետք է զարգացնենք: Բանակը պետք է ուժեղացնենք, պաշտպանության հիմնաքարը ամուր դնենք և հետո փոխանցենք մեր սերունդներին: Այսօր համայնքում կան գորակոչից խուսափոխ թվով 11 զինակոչիկ, որոնք զտնվում են արտ. երկրներում, մի մասը արդեն իսկ այնտեղի քաղաքացիներ են դարձել: Հարկավոր է բոլորս միասին պայքարենք և տվյալ երիտասարդներին հետ բերենք և ուղարկենք ծառայության: Մեր համայնքի համար ուղակի ամոթ է գորակոչից խուսափելը:

3. Քաղաքաշինության բնագավառ

Հարգելի համայնքի բնակիչներ, քաղաքաշինության բնագավառում ես կասեի, մենք շատ թերացումներ ունենք: Խոսքս վերաբերվում է նոր բնակարաններ կառուցողներին, խնդրում եմ շինություն կառուցելու թույլտվություն ստանալ, վերջապես դա բխում է ձեր իսկ շահերից: Համայնքում կան տներ, որոնց սեսմակայունությունը ապահովված չէ, մարդը տունը կառուցում է առանց հաշվի առնելու նախագծող կազմակերպության կարծիքը: Կան շենքեր որոնց մի մասը չեն դիմանա 3-ից 4 բալանոց երկրաշարժից: Եվ ես որպես համայնքի ղեկավար զգալով վտանգը զգուշացնում եմ բոլոր բնակչությանը շինարարությունը կատարելուց առաջ, կատարել բոլոր փաստաթղթային աշխատանքները հակառակ դեպքում օրենքով սահմանված կարգով կկասեցվի շինարարության աշխատանքները և տվյալ անձինք կենթարկվեն պատասխանատվության: Համայնքում բնակիչները արդեն հասկացել են որ պիտի շինարարություն անելուց առաջ հանեն համապատասխան շինարարության թույլտվություն:

4. Հողօգտագործման բնագավառ

Համայնքում չկան հողօգտագործման խաղտումներ: Համայնքի հողերը հսկվում են մեր կողմից: Պահպանված են պատմամշակույթային հողերը:

5. Տրանսպորտի բնագավառ

Կառուցապատված է համայնք մտնող գլխավոր ճանապարհը: Մենք ուղակի հիշելով մեր ավիրված ճանապարհը աչքի լույսի պես պետք է պահպանենք մեր գլխավոր ճանապարհը, որը կառուցվել է պետության կողմից: Այս տարի բյուջեով նախատեսված է համայնքի փողոցների լուսավորության հարցը, որի համար նախատեղյա՞ծ է 429.1 հազար դրամ:

6. 2013 թվականի բյուջե

2013 թվականի բյուջեում նախատեսված է հետևյալ աշխատանքները.

1. Տեղական ինքնակառավարում /գյուղապետարան/ 15645.6 հազար դրամ
2. Մշակույթ միացյալ տնօրինություն 3955.4 հազար դրամ
3. Աղբահանություն 1300.0 հազար դրամ
4. Նախադպրոցական կրթություն 779.2 հազար դրամ
5. Սպորտ ծառայություն 450.0 հազար դրամ
6. Սոցիալական օգնություն 4200.0 հազար դրամ
7. Ոռոգում 100.0 հազար դրամ
8. Այլ մշակութային կազմակերպություն 850.0 հազար դրամ
9. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն 1500.0 հազար դրամ
10. Ընդհանուր բնույթի այլ ծառայություն 38.0 հազար դրամ

7. Գյուղատնտեսության բնագավառ

2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ կատարվել է ընտանի կենդանիների հաշվառում, որի արդյունքները հետևյալն են՝

8. Խոշոր եղջերավոր անասուններ 277 որից՝
ա/ կովեր 101
բ/ արտադրող ցուլեր 1
գ/ երինջներ 1-ից 2 տարեկան 77
դ/ երինջներ 2-ից բարձր 17
ե/ այլ սեռատարիքային 81
9. խոզեր 122 որից՝
ա/ մայրեր 48
բ/ 4-ից 12 ամսեկան 43
10. հավեր 1554 որից ասնան հավեր
ա/ 1235

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԿԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գյուղ տեխնիկայի ձեռքբերում
2. Մանկապարտեզի շենքի կառուցում
3. Ակունքի շենքի վերանորոգում
4. Ոռոգման ցանցի վերանորոգում
5. Խմելու ջրի ցանցի վերանորոգում
6. Հակակարկուտային կայանների տեղադրում /առնվազն 3 հատ/

Հասցե՝ Ներսիս Մանուկյանի անվան համալսարանի Կոլմիցի օրհանգրվանի 1-ին համալսարանական կենտրոնի 1-ին հարկուկ, Երևան, Հայաստան

Ստորագրություն՝  Ս. Կարամյան

